ՈՒՐԱՐՏԱԿԱՆ «ԱՐԴԻՆԻ» ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Լ. Ն. ԲԻՅԱԳՈՎ

Ուրարտական «Արդինի» անվան և նրա ասուրական համարժեքի՝ «Մուսասիրի» ստուգաբանությունը առ այսօր մնում է չպարզաբանված։ Ասուրական աղբյուրներում այդ անունը հանդիպում է և՛ քաղաքի, և՛ երկրի բացահայտիչներով։

Մի շարք հետազոտողներ առաջարկել են ինչպես ուրարտական անվան, այնպես էլ ասուրական «Մուսասիր» անվան տարբեր ստուգաբանություններ։ Այսպես, Կ. Ֆ. Լեման-Հաուպտը «Մուսասիր» անունը մեկնաբանում է որպես «օձի դուրս գալու (վայրը)», իր կարծիքը հիմնավորելով տեղանքի հայեցողական դիտարկումով[1]։ Հնարավոր է, որ առաջարկելով այսպիսի ստուգաբանություն, Կ. Ֆ. Լեման-Հաուպտը նկատի է ունեցել Մուսասիրի Ուրզանա թագավորի կնիքը, որը դրոշմված էր աքքադերենով։ Ինքը՝ Ուրզանան Մուսասիրը անվանում է «քաղաք ագռավի (՞), որի երախը չար (անմատչելի— Լ. Բ.) լեռներում բաց է ինչպես օձինը»[2]։ Ա. Գյոտցեն գտնում է, որ այն առաջացել է ասուրական şaşiru(m) — *«ծղրիդ, մորեխ» բառից և ենթադրում է, որ ուրարտական «Արդինի» անվանումը նույնպես առաջացել է ուրարտական, «ծղրիդ, մորեխ» նմանօրինակ արմատից[3]։ Գ. Ա. Մելիքիշվիլին կասկածի տակ է առնում այդ ստուգաբանությունների հավաստիությունը։*

Մհերի դռան արձանագրության մեջ հիշատակվում է Արդի աստվածուհու անունը[4]։

Գ. Բ. Ջահուկյանը Ardini *անվանումից անջատում է* Ard *արմատը և կապում ուրարտական* ardiše — *«ուժ, իշխանություն, կարգադրություն, հրաման» գոյականի հետ։ Բացի այդ, նա հեռավոր ցեղակցություն է հաստատում հնդեվրոպական* *ar-t-; *r̥-t- *հիմքերի հետ (հմմտ. ալան.* aðð *«աստված»*[5]։

Հաշվի առնելով, որ Ուրարտուում, ինչպես և ողջ Հին Արևելքում տարածված էին աստվածանուններից կազմված տեղանուններ, Ն. Վ. Հարությունյանը «Արդինի» անվանումը կապում է Արդի աստվածուհու անվան հետ և ենթադրում է, որ Խալդի աստծու պաշտամունքը ծագել է Մուսասիրում շատ ավելի ուշ, մոտավորապես Ռուսա 1-ինի կառավարման ժամանակներում[6]։

---

[1] C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt. Berlin und Leipzig, 1926, II, 1 S. 305—306.

[2] И. М. Дьяконов, Ассиро-Вавилонские источники по истории Урарту («Вестник древней истории», М., 1951, № 2—4 (*այսուհետև՝* АВИИУ), 1, № 48).

[3] A. Goetze, Muşaş(ş)ir, Revue d'Assyriologie, Paris, 1952, XLVI, № 3, p. 156—159.

[4] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (*այսուհետև՝* УКН), *№ 27, տող 23։*

[5] Г. Б. Джаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967, *էջ 39։*

[6] Н. В. Арутюнян, Биайнили (Урарту). Ереван, 1970, стр. 354—355.

«Արդինի» անունը ուրարտական բոլոր տեքստերում ունի քաղաքի բացահայտիչ՝ URU[7]։ Բայց գրության մեջ ուրարտական գրիչները պարզորոշ տարբերակում էին աշխարհագրական անվանումների կազմվելու ձևերը։ Այն տեղանունները, որոնք կազմվում էին անձնանուններից, որպես կանոն գրվում էին I ցուցիչով (ᵢArgištiḫinili), իսկ աստվածանուններից կազմվածները ունեին աստվածության բացահայտիչ՝ DINGIR (ᴰQueraiini, ᴰTeišebaini) կամ էլ միանգամից երկուսը՝ քաղաքի և աստվածության (ᵁᴿᵁ.ᴰQueraitaše)[8], իսկ մնացած աշխարհագրական անվանումները, այդ թվում և «Արդինին» ունեն միայն քաղաքի բացահայտիչ՝ URU, որը, ինչպես մեզ թվում է, կասկածի տակ է դնում «Արդինի» անվան այն ստուգաբանությունը, որ բխեցվում է Արդի աստվածուհու անունից։ Ինչ վերաբերում է Արդինիում Խալդիի պաշտամունքի առաջացման ժամանակին, ապա մեր կարծիքով, այն առաջացել է շատ ավելի վաղ, քանի որ արդեն հին դարաշրջանում Արդինին ուրարտական ցեղերի կրոնական կենտրոնն է եղել[9]։

Ինչպես պարզվում է Սարգոն 2-րդի տարեգրություններից, այն ավարի մեջ, որ հափշտակվել էր Խալդիի մուսաՀիրյան տաճարից, հիշատակվում են Մենուա թագավորի մեծ եղբայրը, Սարդուրի՝ Իշպունիի որդու արձանը և ցուլի ու կովի հետ հորթի արձանները՝ պատրաստված իր պատվերով[10]։ Այսպիսով, դեռևս Մենուայի կառավարման ժամանակ, հնարավոր է և Իշպունիի կառավարման օրոք, Խալդի աստծո տաճարը գոյություն ունենար Մուսասիրում։

Այս նույն կարծիքին է նաև Բ. Բ. Պիոտրովսկին, որը տաճարի կառուցումը վերագրում է Մենուայի կառավարման շրջանին[11]։

Գ. Ա. Մելիքիշվիլին «Արդինի» անվան երկու հնարավոր ստուգաբանություն է առաջարկում, որից առաջինը կապված է նույն Մհերի դռան արձանագրության մեջ հիշատակված Արդիի հետ։ Դեռևս Գ. Մ. Ղափանցյանը ուշադրություն է դարձրել, որ ardi-ն հիշատակվում է մի շարք աստվածությունների անուններում (Շերալդի, Ծինուլարդի) և ենթադրում է, որ ardi-ն հնարավոր է, որ նախապես եղել է հասարակ անուն և ըստ երևույթին ունեցել է «աստղ, լուսատու» նշանակությունը[12]։ Այդ հասարակ ardi անվան հետ էլ Գ. Ա. Մելիքիշվիլին կապում է Արդինի քաղաքի անվանումը, գտնելով, որ ասուրական «Մուսասիր» անվան նշանակությունը կապ ունի ուրարտական սույն բառի հետ[13]։

Գ. Ա. Մելիքիշվիլու առաջարկած երկրորդ տարբերակում ենթադրվում է, որ «Արդինի» անունը ծագել է խուռիական art/de—«քաղաք» բառից, չնայած ուրարտացիները «քաղաք» բառի համար ունեին այլ բառ՝ patari։ Այսպիսի ստուգաբանությունը կարող է հավաստի համարվել միայն այն դեպքում,

---

7 УКН, 264, տող 2, 8, 127, 5, տող 42։

8 Բացառություն է կազմում ᵁᴿᵁḪaldiriulhi անվանումը, որը Գ. Ա. Մելիքիշվիլու վկայությամբ՝ Խալդի աստծո հետ ոչ մի առնչություն չունի (УКН, էջ 428)։

9 Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 41—42, 48, Г. А. Меликишвили, Наири—Урарту, Тбилиси, 1954, стр. 160.

10 АВИИУ, I, № 49, տող 367 և հաջորդները։

11 Б. Б. Пиотровский, Искусство Урарту, М., 1959, стр. 201.

12 Г. А. Капанцян, Об урартском божестве Adaruṭḫa («Տեղեկագիր», 1944, № 6—7, էջ 26—29)։

13 Г. А. Меликишвили, Наири—Урарту, стр. 36.

ինչպես ենթադրում է Գ. Ա. Մելիքիշվիլին, եթե Արդինին նախ լիներ խուռիական բնակավայր, իսկ հետո՝ ուրարտական[14]։ Իր ստուգաբանությունը այդ նույն ardi արմատից է բխեցնում նաև Ի. Մ. Դյակոնովը, որը տվյալ անվան ne/i վերջավորությունը համարում է որոշիչ մասնիկ, ինչ գոյություն ունի և՛ ուրարտերենում, և՛ խուռիերենում և այն թարգմանում է որպես «քաղաք» Die Stadt[15]։

Խուռիական ցեղերի տարածման շրջանը մ. թ. ա. երկրորդ հազարամյակում եղել է շատ լայն։ Այն իր մեջ ներառում էր տարածքներ Սիրիայից, Հյուսիսային Միջագետքից, Հայկական լեռնաշխարհից և Կիլիկյան Տավրոսից։ Խուռիական պետություններից խոշորագույնի՝ Միտանիի ազդեցությունը տարածվում էր Վերին Եփրատի հովտով դեպի վեր և ընդգրկում էր նաև արևելյան Տիգրիսի և Վերին Զաբի հովիտները, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհից հարավ ընկած ամբողջ տարածքը։ Հնարավոր է, որ Միտանիի ազդեցությունը տարածված է եղել մինչև Վանա լճի հարավային ափերը[16]։

Արդինի (ասուրերեն՝ Մուսասիր) քաղաքի երկիրը հետազոտողների կողմից տեղայնացվում է Վանա լճի մոտավորապես հարավ-արևելքում, իսկ նրա մայրաքաղաքը, Արդինին՝ ներկայիս Ռևանդուզ քաղաքի շրջանում[17], այսինքն՝ այն տարածքում, որը գտնվում էր Միտանիի ազդեցության տակ և մտնում էր խուռիական ցեղերի տարածման շրջանի մեջ[18]։

Մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսում խուռիների բնակության տարածքը, հավանաբար Միտանիի անկման պատճառով, սկսել է փոքրանալ, և, ըստ երևույթին մ. թ. ա. XIV—XIII դդ., այդ տարածքում սկսել են բնակություն հաստատել ուրարտական ցեղերը, որոնք նախապես բնակվելիս են եղել Վանա լճի հարավ-արևելյան ափի երկայնքով, և որոնք էլ խուռիներից փոխ են առել «Արդինի» անվանումը։

Բացի այդ, հաշվի առնելով ուրարտական և խուռիական լեզուների արտակարգ մոտ ադգակցությունը, կարելի է ենթադրել, որ ուրարտերենում գոյություն է ունեցել ardi բառը, «քաղաք» նշանակությամբ, որը հետագայում դուրս է մղվել patari բառի կողմից, կամ էլ դրանք երկուսն էլ զուգահեռաբար գոյություն են ունեցել (հմմտ. անգլերեն town և city)։

Այսպիսով, ի մի բերելով վերը շարադրվածը, գալիս ենք այն հետևության, որ այն տարածքը, որի մեջ ըստ երևույթին պետք է գտնվեր Արդինի քաղաքը, նախապես բնակեցված է եղել խուռիներով։ Հետագայում այդ տարածքում բնակություն հաստատեցին ուրարտական ցեղերը, որոնք իրենց հետ բերին խալդի աստծո պաշտամունքը և, ի վերջո, այդ ցեղերի միավորման նախնական փուլում Արդինին դարձավ նրանց քաղաքական կենտրոնը, իսկ խալդիի պաշտամունքը, որպես բուսականության աստծո, վերաճեց գերագույն աստծո պաշտամունքի։

---

[14] Նույն տեղում, էջ 36։

[15] II. M. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1968, стр. 132. 139.

[16] И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, стр. 44—47.

[17] Г. А. Меликишвили, Мусасир и вопрос о древнейшем очаге урартских племен («Вестник древней истории», 1948, № 2, стр. 37, прим. 1).

[18] A. Goetze, Kleinasien, München, 1954, S. 48–49 և քարտեզը. И. М. Дьяконов, Предыстория армянского народа, стр. 45 և քարտեզը։

К ВОПРОСУ ОБ ЭТИМОЛОГИИ УРАРТСКОГО НАЗВАНИЯ «АРДИНИ»

Л. Н. БИЯГОВ

Резюме

Город Ардини урартских источников соответствует ассирийскому названию Muṣaṣir, выступающему также и в качестве области. К. Ф. Леманн-Гаупт интерпретирует Мусасир как «(место) выхода змеи», а А. Гетце как «сверчок, саранча» от аккадского «ṣaṣiru» и считает, что урартское Ардини должно также означать «сверчок, саранча».

Г. Б. Джаукян в названии Ардини выделяет корень ard и сравнивает с урартским ardiše— «сила, власть», устанавливая таким образом далекое родство с индоевропейским «*ar-t-, *r-t-». Н. В. Арутюнян урартское Ардини выводит из имени богини Ардини мхеркапусинской надписи.

Не соглашаясь с интерпретациями названия Мусасир, Г. А. Меликишвили в свою очередь предлагает два варианта этимологии названия Ардини. Первый из них исходит от нарицательного ardi, которое по предположению Г. А. Капанцяна могло иметь значение «звезда», а второй — от хурритского корня arł/de—«город», считая его действительным в случае, если ранее на этой территории обитали хурриты. Такую же этимологию предлагает И. М. Дьяконов.

В I половине II тыс. до н. э. территория Мусасира (около совр. города Ревандуз) входила в ареал распространения хурритских племен. В конце XIV в. до н. э., видимо, в результате падения Митаннии, сюда начали переселяться урартские племена и заимствовали название Ардини, превратив его в центр объединения.

Кроме того, хурритские и урартские языки были чрезвычайно близки и вполне возможно предположение, что и в урартском существовал термин ardi для обозначения города.